**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Հայաստանի ազգային պատկերասրահի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունվարի 18-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 պայմանագրում 2023 թվականի նոյեմբերի 22-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1936-Ն որոշում |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 18.01.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 գնման պայմանագրի

ք. Երևան 22.11.2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՍՏԵՊՌՈԵԿՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1936-Ն որոշումը և Հայաստանի ազգային պատկերասրահի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 2023 թվականի հունվարի 18-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>ՀՎՀՀ 02565827<br>Հ/Հ 900011042166 | <<ՍՏԵՊՌՈԵԿՏ>> ՍՊԸ<br>ք.Երևան Բաբաջանյան 39/519<br><<Ինեկոբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 2058221969510001<br>ՀՎՀՀ 01023371 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ________ Հ. Պողոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
18.01.2023թ. կնքված
N ՀՀՔԿ- ԳՀԾՁԲ-22/12 գնման պայմանագրի
22.11.2023թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N 2
18.01.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/12 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200-639 | Հայաստանի ազգային պատկերասրահի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ | - | - | - | 3 820 000 | 3 820 000 | 3 820 000 | 5 117 600 | 5 117 600 | 5 117 600 | 5 117 600 | 9 000 000 | 9 000 000 | 9 000 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827
Հ/Հ 900011042166

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՍՏԵՊՌՈԵԿՏ>> ՍՊԸ
ք.Երևան Բաբաջանյան 39/519
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2052822196951001
ՀՎՀՀ 01023371

Տնօրեն՝

_______________ Հ. Պողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.